

Գործ թիվ ԵԱԴԴ/3100/02/16

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

11 մայիսի 2017 թ.

ք. Երևան

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՑԱԿ ԵՎ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ դատավոր Գոռ Թորոսյանի

Քարտուղարությամբ Անի Շահնազարյանի

Մասնակցությամբ
հայցվոր Սվետլանա Նիկոյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սվետլանա Նիկոյանի (անձնագիր AN 0620709, տրված 20.08.2013 թվականին 013-ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան Դավթաշեն 3-րդ թաղ., 7-րդ հանրակացարան, բնակարան 25) ընդդեմ Կոլյա Սարգսյանի, մասնակցությամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք Ռոբերտ Հարությունյանի, Ռոլանդ Հարությունյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Դատավարական նախապատմությունը

Մվետլանա Նիկոյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Կոլյա Մարգարյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, որը ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Թորոսյանի 19.09.2016 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ գլխի կանոնների համաձայն գործը նախապատրաստվել է դատաքննության: Դատարանի 14.03.2017 թվականի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Դատարանի որոշմամբ Ռոբերտ Հարությունյանը, Ռոլանդ Հարությունյանը ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք:

2. Հայցվորի դիրքորոշումը

Հայցվորը նշել է, որ 2012 թվականին վերանորոգել է բնակարանը և 07.11.2013 թվականին մեկնել Ուկրաինա: 05.01.2014 թվականին հայցվորին հայտնել են, որ 38 բնակարանից ջուր են բաց թողել, և հայցվորի գրեթե նոր վերանորոգված բնակարանն ամբողջությամբ ջրվել է, ինչի հետևանքով պատերը, առաստաղը ճաքել են, կահույքը՝ դոֆերմացվել, փչացել, անկողնային պարագաներն այլևս պիտանի չեն օգտագործման, հատակը տեղեհան է եղել, ուռել: 26.07.2016 թվականին հավաքելով ամբողջ վերջին հնարավորությունները՝ հայցվորը գնել է ինքնաթիռի տոմս և վերադարձել Երևան, որպեսզի լուծի խնդիրը: Մինչ այդ հայցվորը չի ունեցել իրավունք և հնարավորություն երկրից դուրս գալու, կապված քաղաքացիական պատերազմի հետ: Հայցվորն Ուկրաինայում ուներ աշխատանք, կայուն եկամուտ և հոգում էր իր և իր ընտանիքի հոգսերը, այնտեղ չունեի աշխատանք, չէր ստանում թոշակ, նպաստ և գտնվում էր ծայրահեղ ծանր ֆինանսական վիճակում: Հայցվորը նշել է նաև, որ փորձել է կապ հաստատել Կոլյա Մարգարյանի հետ, սակայն ապարդյուն. բնակարանը վարձով է հանձնված, իսկ հեռախոսագանգերին բացարձակապես չի պատասխանում:

Հայցվորը նշել է, որ ստացվել է հանդիպել պատասխանողի որդու հետ, նախ խոստացել է գումարը, շատ կոպիտ պատասխանել է և հեռացել: Այդպես էլ չի ստացել խոստացածը: Հետաքրքրվելով մասնագետից, հայցվորին պարզ է դարձել, որ վերանորոգման համար անհրաժեշտ է 150,000 ՀՀ դրամ վերանորոգող վարպետի և 200,000 ՀՀ դրամ շինանյութի ձեռք բերման համար:

Այսպիսով, խնդրել է պատասխանողից բռնագանձել իրեն հասցված նյութական վնասը 350,000 ՀՀ դրամ և բարոյական վնասը՝ 200,000 ՀՀ դրամ, ինչպես նաև ինքնաթիռի տոմսի արժեքը, որը կազմում է 200,000 ՀՀ դրամ:

Դատարան ներկայացրած դիմումով հայցվորը ներկայացրել է կրած ֆինանսական ծախսերի ցուցակը՝ պետական տուրք՝ 15,000 ՀՀ դրամ, Օդեսա-Երևան ավիատոմսի գինը՝ 73,000 ՀՀ դրամ, տոմսի հայերեն թարգմանությունը՝ 4,000 ՀՀ դրամ, որդիների կողմից ուղարկված

լիազորագրերի գումարը՝ 24,000 ՀՀ դրամ, լիազորագրերի թարգմանություն՝ 15,000 ՀՀ դրամ:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը հայցադիմումի պատասխան կամ առարկություն չի ներկայացրել:

4. Երրորդ անձանց դիրքորոշումը

Երրորդ անձինք դիրքորոշում չեն հայտնել

5. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը
- 18.08.2016 թվականին «Դավթաշեն 3/Ս-1» համատիրության կառավարչի կողմից հաստատված հայտարարության համաձայն՝ 2014 թվականին իմ վերևի հարևանը անփութության հետևանքով ջուր է բաց թողել և ավերակի է վերածել իմ նոր վերանորոգված բնակարանը՝ հասցնելով նյութական վնաս: Վերոնշյալ փաստը վկայում են հարևանները՝ Գայանե Տատենցյան, Գարունիկ Գևորգյան, Լուսինե Մկրտչյան:

- 10.08.2016 թվականին «Դավթաշեն 3/Ս-1» համատիրության տեղեկանքի համաձայն՝ տրվում է Սվետլանա Նիկոյանին առ այն, որ Դավթաշեն 3 թաղ., 7 հանր. 25 բնակարանում 2014 թվականին Դավթաշեն 3 թաղ. 7 հանր. 38 բնակարանից ջուրը փաթվել է 25 բնակարանի վրա, որի պատճառով բնակարանը կրել է նյութական վնաս:

- 15.01.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 469911 վկայականի համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն համ., Դավթաշեն 3 թաղ. 7 հանր. 25 բնակարանի նկատմամբ գրանցված է Սվետլանա Նիկոյանի, Ռոբերտ Հարությունյանի, Ռոլանդ Հարությունյանի սեփականություն իրավունքը:

- Գործում առկա թվով 15 լուսանկարներում պատկերված են բնակարանի պետրը, առաստաղը և հատակը, հատակի մանրատախտակը՝ դուրս եկած վիճակում:

- 12.07.2016 թվականի դրամարկղային մուտքի թիվ 559 օրդերի համաձայն՝ Ս. Նիկոյանից ստացվել է 3,707 գրն, ստացման հիմքը՝ տուր. ծառայության վճար: 27.03.2017 թվականի կտրոնի համաձայն՝ Ա/Ձ Թեհմինե Հարությունյանին վճարվել է 4,000 ՀՀ դրամ:

- Գործում առկա են 06.03.2017 թվականի Ռոբերտ Համբարձումյանի և Ռոլանդ Համբարձումյանի տված լիազորագրերի ու կրահներենից թարգմանությունները, ինչպես նաև 13.03.2017 թվականի կտրոնի համաձայն՝ Ա/Ձ Թեհմինե Հարությունյանին վճարվել է 15,000 ՀՀ դրամ:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները
Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է

կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

22 քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառով ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

1) կյանքի իրավունքը.

2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.

3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.

4) արդար դատաքննության իրավունքը.

5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.

6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.

7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.

8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.

9) սեփականության իրավունքը:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

22 քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով

պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում են սույն հոդվածին և սույն օրենսգրքի 162.1 հոդվածին համապատասխան:

2. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

3. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե սույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հատուցվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան:

6. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

7. Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

- 1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,
- 2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

8. Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

9. Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

10. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով: Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

22 քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին

կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հա-տուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նա-խատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինաչափ գործողություններով պատճառված վնասը հատուցվում է օրենքով նախատեսված դեպքերում: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գոր-ծողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամա-նակյա առկայությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող ան-ձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգա-մանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքա-ցիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը (տես Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԴ 3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշումը): Վերը նշված դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես՝ դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում: Իրավական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը: Վնասի հատուցման գործերով փաստերի իրավական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական և դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանավորող իրավաբանական փաստերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումներից հետևում է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,

- պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև (տես ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Արթուր Մարդանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ պետությանը պատճառված 7.363.600 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին թիվ ՏԴ/0041/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 05-ի որոշումը): Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ: Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում (տես «Բի Լայն» ՍՊԸ-ն ընդդեմ Արտակ Զաքարյանի՝ 7.639.837 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2128/02/13 գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի որոշումը):

Դատարանը հարկ է համարում նշել, որ վնասի չափը որոշվում է ոչ թե խախտված իրավունքի բնույթից ելնելով, այլ հաշվի առնելով ոչ իրավաչափ վարքագծի հետևանքները: Հետևաբար նույն իրավունքի խախտումը կամ նույն բնույթի ոչ իրավաչափ վարքագիծը կարող է առաջացնել տարբեր չափի վնասներ, որն էլ հիմք է վնասի չափը որոշելու համար: Վնասի չափի գնահատման հիմք է հանդիսանում համարժեքությունը, որը կարող է արտահայտվել դրամական

համարժեքով:

Դատարանը հարկ է համարում նշել նաև, որ վնասի դրսևորման ձևերը սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, որի մեջ առաջինը ներառվում է իրական վնասը: Իրական վնասը դրսևորվում է գույքի կարստով, որի դեպքում վնասի չափը որոշվում է գույքի կորստի պահին առկա շուկայական արժեքի համարժեքի չափով: Իրական վնասը կարող է դրսևորվել նաև գույքի վնասվածքով, որի դեպքում վնասի չափը որոշվում է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե արդյոք գույքը վնասվելու հետևանքով կորցրել է իր ինչպես սպառողական, այնպես էլ դրամային արժեքը: Այդ դեպքում վնասի չափը որոշվում է գույքի վնասվածքը վերականգնելու համար անհրաժեշտ ծախսերի չափով: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 1-ին արձա-նագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Նման իրավիճակներում Եվրոպական դատա-րանը հիմք է ընդունել վնասի հատուցման վերաբերյալ ներպետական կանոնները, որի հի-ման վրա վերջինս այն դիտարկել է որպես «ակտիվ», «գույք»ն հետևաբար նաև «տիրապե-տում» 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Արդյունքում Եվրոպական դա-տարանը գտել է, որ դատական ակտի հիման վրա դիմողները կարող են ունենալ «օրինական սպասելիք», որ պատահարի արդյունքում վերջիններիս ներկայացրած պահանջը պետք է քննարկվի վնասի հատուցման ընդհանուր կանոններով (տես՝ PRESSOS COMPANIA NAVIERA S.A և մյուսներն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31):

Հետևաբար դատարանը գտնում է, որ սույն գործի համար նշանակություն ունեցող փաստերն են
գ պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի,
գ վնասների ու ոչ ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կա-պի
գ պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:
Հետևաբար դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել գործի համար
նշանակություն ունեցող վերոնշյալ փաստերից յուրաքանչյուրի առկայության կամ
բացակայության հարցը:

Պարտապանի ոչ օրինաչափ վարքագիծ
Սույն գործի փաստերի, մասնավորապես, 18.08.2016 թվականին «Դավթաշեն 3/Ս-1»
համատիրության կառավարչի կողմից հաստատված հայտարարության համաձայն՝ 2014
թվականին իմ վերևի հարևանը անփութության հետևանքով ջուր է բաց թողել և ավերակի է
վերածել իմ նոր վերանորոգված բնակարանը՝ հասցնելով նյութական վնաս: Վերոնշյալ փաստը
վկայում են հարևանները՝ Գայանե Տատենցյան, Գարունիկ Գևորգյան, Լուսինե Մկրտչյան:
10.08.2016 թվականին «Դավթաշեն 3/Ս-1» համատիրության տեղեկանքի համաձայն՝ տրվում է
Սվետլանա Նիկոյանին առ այն, որ Դավթաշեն 3 թաղ., 7 հանր. 25 բնակարանում 2014 թվականին
Դավթաշեն 3 թաղ. 7 հանր. 38 բնակարանից ջուրը փաթվել է 25 բնակարանի վրա., որի
պատճառով բնակարանը կրել է նյութական վնաս: 15.01.2003 թվականի սեփականության
իրավունքի գրանցման թիվ 469911/վկայականի համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն համ.,

Դավթաշեն 3 թաղ, 7 հանր, 25 բնակարանի նկատմամբ գրանցված է Սվետլանա Նիկոյանի, Ռոբերտ Հարությունյանի, Ռուլանդ Հարությունյանի սեփականության իրավունքը: Հիմք ընդունելով վերոնշյալ ապացույցները, դրանք համադրելով վերևում կատարված վերլուծությունների հետ՝ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանողի կողմից հայցվորին պատկանող բնակարան ջուր լցնելու փաստը հիմնավորվել է միայն հայցվորի հայտարարությամբ, որը հաստատվել է համատիրության կառավարչի կողմից հարևանների վկայությամբ, ինչպես նաև համատիրության կողմից հաստատված տեղեկանքով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տե՛ս, Էդգար Մարկոսյանն և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզումները: Ապացույցի գնահատումը ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարել որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների

միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական գանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները (տես Երանոս Հարությունյանի ընդդեմ Էլաննա Հարությունյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Կարապետ Հարությունյանի 08.07.1992 թվականի կտակն անվավեր ճանաչելու, կտակի հիման վրա Ելենա Հարությունյանի անվամբ 24.09.1999 թվականին Երևան քաղաքի Արաբկիր (Հ. Էմինի) թիվ 46 փողոցի 66-րդ տան նկատմամբ տրված ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու, իրեն փաստացի տիրապետման հիմքով մոր՝ Արևիկ Նազարյանին պատկանող 1/2 բաժնեմասի նկատմամբ 1/6 բաժնի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, դրա հիման վրա և կառուցման հիմքով տան ավելացված մասի նկատմամբ իր սեփականության իրավունքը Երևան քաղաքի Հ. Էմինի 66-րդ տան 1/2 մասի նկատմամբ ճանաչելու, այդ մասով Ելենա Հարությունյանի անվամբ ժառանգության իրավունքի վկայագրի և ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 որոշման հիման վրա անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 12.10.1999 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, պատասխանող Էլաննա Հարությունյանի անվամբ 07.08.2013 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 15.08.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ԵԱՔԴ/1911/02/13 գործով Վճռաբե դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը):

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները, դրնաց հիման վրա գտահատելով վերևում նշված ապացույցները՝ դատարանը գտնում է, որ նշված ապացույցները չեն կարող սույն գործով դիտվել բավարար պատասխանողի կողմից ոչ օրինաչափ գործողություն կատարելու փաստը հաստատված համարելու համար:

Դատարանի վերոնշյալ պատճառաբանությունը հիմնվում է այն փաստի վրա, որ որպես նշված տեղեկության աղբյուր հանդիսանում է հայցվորը, ինչպես նաև հայտարարության մեջ նշված անձինք, ովքեր միայն նշել են պատասխանողի կողմից ջուր լցնելու մասին, սակայն նշված անձանց տեղեկության աղբյուրը նշված չէ, բացի այդ ինքնին անձանց կողմից Դավթաշեն 3 թաղ. 7 հանր, 25 բնակարան ջուր լցված լինելու հանգամանքի մասին տեղեկությունը չի կարող վկայել նշված գործողությունը սույն գործով պատասխանողի կողմից կատարված լինելու մասին:

Դատարանի կողմից վերոնշյալ ապացույցների գնահատման համար հիմք է նաև հայցվորի այն դիրքորոշումը, որ 07.11.2013 թվականին մեկնել Ուկրաինա, իսկ նշված գործողությունների վերաբերյալ հայցվորի տեղեկությունները վերաբերում են 2014 թվականին, մինչդեռ հայցվորն ըստ իր դիրքորոշման Հայաստանի Հանրապետություն է վերադարձել 26.07.2016 թվականին:

Նշված համատեքստում գնահատելով «Դավթաշեն 3/Ս-1» համատիրության տեղեկանքը՝ դատարանն արձանագրում է, որ նշված տեղեկանքը դրանում նշված տեղեկությունների ձեռք բերման վերաբերյալ որևէ հիմք չի պարունակում, հետևաբար նշված ապացույցը նույնպես չի կարող բավարար համարել պատասխանողի կողմից ոչ օրինաչափ գործողություն կատարելու փաստը հաստատելու համար:

Հետևաբար դատարանը եզրակացնում է, որ սույն գործով հայցվորը, կրելով պատասխանողի

կողմից ոչ օրինաչափ գործողություն կատարելու փաստի ապացուցման պարտականությունը, չի ապացուցել, որ պատասխանող Կոյա Սարգսյանի կողմից առկա է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև հայցվորի սուբյեկտիվ իրավունքի խախտում: Վերոնշյալի հիման վրա դատարանը գտնում է, որ նշված փաստի բացակայությունն արդեն բավարար է հայցը մերժելու համար, քանի որ անկախ մյուս պայմանների առկայությունից պատասխանողի ոչ օրինաչափ գործողությունների բացակայությունն արդեն իսկ բացառում է պատճառված վնասի հատուցման հնարավորությունը վերջինիս կողմից: Այնուամենայնիվ, դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն գործով վնասի հատուցման համար անհրաժեշտ մյուս տարրերի հարցին:

Վնասների

Սույն գործով հայցվորը նշել է, որ հետաքրքրվելով մասնագետից, հայցվորին պարզ է դարձել, որ վերանորոգման համար անհրաժեշտ է 150,000 ՀՀ դրամ վերանորոգող վարպետի և 200,000 ՀՀ դրամ շինակյութի ձեռք բերման համար, որի հիման վրա խնդրել է պատասխանողից բռնագանձել իրեն հասցված նյութական վնասը 350,000 ՀՀ դրամ և բարոյական վնասը՝ 200,000 ՀՀ դրամ:

Մինչդեռ դատարանն արձանագրում է, որ հայցվորը, կրելով վերոնշյալ փաստերի ապացուցման պարտականությունը, դատարանին նշված չափով վնաս կրելու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել:

Հետևաբար դատարանը գտնում է, որ սույն գործով չի հաստատվել նաև հայցվորի գույքին 350,000 ՀՀ դրամի չափով վնաս պատճառվելու փաստը: Նշված համատեքստում անդրադառնալով 200,000 ՀՀ դրամ բարոյական վնաս հատուցելու վերաբերյալ պահանջին՝ դատարանը, հիմք ընդունելով վերևում նշված օրենսդրական կարգավորումները, արձանագրում է, որ ՀՀ գործող օրենսդրության պայմաններում ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում, իսկ դրանք այն դեպքերն են, երբ քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները, որպիսին սույն դեպքում առկա չէ: Հետևաբար դատարանը գտնում է, որ սույն գործով չի հիմնավորվել այնպիսի ոչ նյութական վնասի առկայությունը, որը ենթակա է հատուցման:

Վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի Վերոնշյալ պատճառաբանությունների հիման վրա դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորի կողմից չի ապացուցվել նաև վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը:

Անդրադառնալով դատական ծախսերին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների

չափին

համամասնորեն:

Նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ բավարարված հայցապահանջների չափին համապատասխան դատական ակտով բռնագանձման են ենթակա նաև գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարները: Մասնավորապես, եթե գործի քննության և լուծման համար անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման համար կատարվել են ծախսեր, ապա անկախ նրանից, թե կողմի կամ դատարանի նախաձեռնությամբ են այդ ապացույցները ձեռք բերվել, դրանց ձեռքբերման համար կատարված ծախսերը ևս մտնում են դատական ծախսերի կազմի մեջ, և դատարանի կողմից դրանց բռնագանձման հարցը ենթակա է լուծման՝ բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն (տես Նազիկ Ղարիբյանն ընդդեմ Սոհեյիլ Քուլաջի Էբրահիմի, Ջարուհի Ենգոյանի՝ պատճառված գույքային վնասի վերականգնման, դրանցից բխող հետևանքների փոխհատուցմանը պարտավորեցնելու, անհիմն հարստացման և բաց թողնված օգուտի տեսքով վնասի գումարների բռնագանձման պահանջների մասին, և Սոհեյիլ Քուլաջի Էբրահիմի և Ջարուհի Ենգոյանն ընդդեմ Նազիկ Ղարիբյանի՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրն առոչինչ ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և երաշխավորագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԱՔԴ/2452/02/12 գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հուլիսի

17-ի

որոշումը):

Դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարների հարցը քննարկելիս էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ նշված գործողությունները կապված լինեն գործի քննության հետ, անհրաժեշտ լինեն գործի քննության համար, այդ գործողությունները կատարված լինեն, ինչպես նաև հիմնավորվի գործով այդ գործողությունների արժեքը, որը վճարվել է այդ գործողությունները կատարած անձի կողմից կամ ենթակա է վճարման: Դատարանը հարկ է համարում նշել, որ չնայած հայցվորը չի նշել, թե նշված գումարը դիտում է որպես դատական ծախս, թե խախտված իրավունքների վերականգնման համար կատարված ծախս, այնուամենայնիվ, գործի քննության հետ կապված ծախսերը, բովանդակային առումով ունենալով նմանություններ խախտված իրավունքը վերականգնելու համար կատարված ծախսերի հետ, օրենսդրի կողմից ներառված են դատական ծախսերի մեջ: Հետևաբար դատարանը գտնում է, որ նշված գումարների բռնագանձման հարցին դատարանը պետք է անդրադառնա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի կիրառմամբ: Սույն գործով հայցվորը հայցվորը հայցադիմումին կից ներկայացրել է 15,000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման վերաբերյալ ապացույց, սույն գործով հայցը ենթակա է մերժման, հետևաբար դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Նշված համատեքստում անդրադառնալով 12.07.2016 թվականի դրամարկդային մուտքի թիվ 559 օրդերին, որի համաձայն՝ Ս. Նիկոյանից ստացվել է 3,707 գրն, ստացման հիմքը՝ տուր. ծառայության վճար, 27.03.2017 թվականի կտրոնին, որի համաձայն՝ Ա/Ձ Թեհմինե Հարությունյանին վճարվել է 4,000 ՀՀ դրամ, գործում առկա են 06.03.2017 թվականի Ռոբերտ Համբարձումյանի և Ռոլանդ Համբարձումյանի տված լիազորագրերի ու կրահներենից թարգմանություններին, ինչպես նաև 13.03.2017 թվականի կտրոնին, որի համաձայն՝ Ա/Ձ Թեհմինե Հարությունյանին վճարվել է 15,000 ՀՀ դրամ, դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ինչպես պետական տուրքի, այնպես էլ այլ դատական ծախսերի բաշխման հիմքում դրված են բավարարված հայցապահանջները կամ դրանց բավարարվածության համամասնությունը, հետևաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով հայցը ենթակա է մերժման, դատարանը գտնում է, որ գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարված գումարների մասով նույնպես դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ, 134-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

Սվետլանա Նիկոյանի հայցն ընդդեմ Կոլյա Սարգսյանի, մասնակցությամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք Ռոբերտ Հարությունյանի, Ռոլանդ Հարությունյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Գ.ԹՈՐՈՍՅԱՆ